## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 96-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի 31-ի N92-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի տարածքում 2021 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված N1:
2.Մինչև 2021 թվականի ապրիլի 27-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել
1) համապատասխան միջոցառումների պլան,
2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն հավելված N2:
3) առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն հավելված N3:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մակիչ Դանիելյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2021թ. ապրիլի 26-ին*
*գ.Մեղրաձոր*

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի
ղեկավարի 2021 թվականի
ապրիլի 26-ի N 96-Ա որոշման

# ՊԼԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/հ | Միջոցառումների անվանումը | Կատարող | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | **1. Կանխարգելիչ միջոցառումներ** | | |
| 1 | Ուսումնասիրել սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը |
| 2 | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա սելավատարերի անհրաժեշտ հատվածները մաքրելու համար: | | |
| 3 | Մաքրել համայնքի սելավատարերը: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները: | | Մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը |
| 4 | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար: | | Մշտական |
| 5 | Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն: | Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ | Անհրաժեշտության դեպքում, սկսած 2021 թվականի ապրիլի 30-ից |
| | **2. Հիմնականմիջոցառումներ** | | |
| 5 | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ | Մշտապես |
| 6 | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Անհրաժեշտության դեպքում |
| 7 | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և | Տարհանման հանձնաժողովի նախագահ, | Անհրաժեշտության դեպքում |

| | | | |
|---|---|---|---|
| | նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը: | համայնքի ղեկավարի տեղակալ | |
| 8 | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Վարչական ղեկավարներ | Ըստ անհրաժեշտության |
| 9 | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների  վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավո-րությունների: | Վարչական ղեկավարներ | Անհրաժեշտության դեպքում |
| 10 | Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև: | «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի Կոտայքի տարածքային կենտրոն | |
| 11 | Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար  ապահովել համապատասխան լուսավորվածություն: | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն «Գեղամա» մասնաճյուղ «Արծաթ» ՀՈԱԿ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր
համայնքի ղեկավարի 2021 թվականի
ապրիլի 26-ի N 96-Ա որոշման

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Մեղրաձոր համայնքի հակահեղեղային կառույցների (Կառույցի) հաշվառման

| Հ/հ | Կառույցի տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ) | Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառաժ) | Կառույցի | | | | Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը (բալ) | Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | երկարությունը (մ) | լայնությունը (մ) | խորությունը (մ) | Կողեզրերի թեքությունը, (0) | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | գյուղ Մեղրաձոր | հեղեղատար | 1000 | 3.0 | 1.5 | 80 | ---- | բնակելի տներ,տնամերձ հողամասեր | բավարար |
| 2 | գյուղ Մեղրաձոր | հեղեղատար | 500 | 3.0 | 1.5 | 80 | ---- | բնակելի տներ,տնամերձ հողամասեր | բավարար |
| 3 | գյուղ Աղավնաձոր | բնական հեղեղատար | 1500 | 6.0 | 1.0 | 45 | ---- | բնակելի տներ,տնամերձ հողամասեր | բավարար |
| 4 | գյուղ Արտավազ | բնական հեղեղատար | 700 | 3.0 | 1.0 | 60 | ---- | բնակելի տներ,տնամերձ հողամասեր | բավարար |
| 5 | գյուղ Մարմարիկ | բնական հեղեղատար | 500 | 3.0 | 1.0 | 45 | ---- | բնակելի տներ,տնամերձ հողամասեր | բավարար |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի
ղեկավարի 2020 թվականի
ապրիլի 26-ի N 96-Ա որոշման

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**Ջրվեժ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ**

| | |
|---|---|
| 1. Վտանգի (աղետի) անվանումը(ները)<br>-սելավ<br>-հեղեղում<br>-սողանք<br>-քարաթափում<br>-և այլն | սելավ, հեղեղում |
| 2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը) | գյուղ Մեղրաձոր, գյուղ Աղավնաձոր, գյուղ Արտավազ, գյուղ Մարմարիկ |
| 3. Առաջացման հնարավոր պատճառները | Ձնհալ, անձրևներ |
| 4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը | գյուղ Մեղրաձոր - 65 առանձնատուն,260 բնակիչ, գյուղ Աղավնաձոր-50 առանձնատուն,200 բնակիչ, գյուղ Արտավազ-25 առանձնատուն,75 բնակիչ, գյուղ Մարմարիկ-20 առանձնատուն,70 բնակիչ |
| 5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկություններր իրականացնելու համար | հեղեղատարների հունի մաքրում |
| 6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2020 թվականին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների | 1. Փրկարարական ծառայություն՝ 300.000 ՀՀ դրամ<br>2. Քաղաքացիական պաշտպանություն՝ 300.000 ՀՀ դրամ<br>3. Այլ պաշտպանություն՝ 50.000 ՀՀ դարմ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 97

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 22-ի N03 որոշումը և անձնական դիմումները *ո ր ո շ ու մ ե մ.*

1.Մեղրաձոր համայնքի «այլ նպաստներ» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել ֆինանսական օգնություն 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ Մեղրաձոր համայնքի բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021 թ. ապրիլի 27-ին
գ.Մեղրաձոր

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի
2021 թվականի ապրիլի 27-ի N97 որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| Հ/Հ | Ազգանուն, անուն, հայրանուն | հասցեն | գումարը |
|---|---|---|---|
| 1 | Մեժլումյան Նարինե Մանվելի | Մեղրաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր, 4-րդ փող. 2 փկղ. 4տ. | 30000 |
| 2 | Գրիգորյան Ալեքսան Վարդանի | Մեղրաձոր համայնք, գյուղ Մարմարիկ, 4-րդ փող. 1 նրբ. 1տ. | 50000 |
| 3 | Խանոյան Վարդուշ Սերյոժայի | Մեղրաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր, 1-ին փող. 63 տ. | 40000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am,
meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 98

### ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի պահանջներով՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

2021 թվականի ապրիլի 30-ին ժամը 16:00-ին հրավիրել Մեղրաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. ապրիլի 28-ին
գ.Մեղրաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք**
**ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 99

ՅՈԼԱԿ ՄԽԻԹԱՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 67-70 հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N73 որոշումը և աճուրդային հանձնաժողովի 2021թվականի ապրիլի 26-ի N 4 արձանագրությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Քաղաքացի՝ Յոլակ Մխիթարի Դանիելյանին Մեղրաձոր համայնքի սեփականություն հանդիսացող Մեղրաձոր համայնքի,Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,91 / զրո ամբողջ իննսունմեկ/ հա մակերեսով արոտավայր, այլ հողատեսքը /ծածկագիր 07-010-0118-0063/ օտարել աճուրդային կարգով:
2.Աճուրդային կարգով ձեռք բերված գյուղատնտեսական նշանակության 0,91 / զրո ամբողջ իննսունմեկ / հա մակերեսով արոտավայր այլ հողատեսքի համար կնքել առուվաճառքի պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. ապրիլի 29-ին
գ.Մեղրաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 100

## ԱՐՏՅՈՄ ՅՈՒՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 67-70 հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N73 որոշումը և աճուրդային հանձնաժողովի 2021թվականի ապրիլի 26-ի N 3 արձանագրությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.**

**1. Քաղաքացի՝ Արտյոմ Յուրիկի Սահակյանին Մեղրաձոր համայնքի սեփականություն հանդիսացող Մեղրաձոր համայնքի,Մարմարիկ գյուղի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 1,0 / մեկ ամբողջ զրո / հա մակերեսով վարելահողը /ծածկագիր 07-044-0129-0030/ օտարել աճուրդային կարգով:**
**2.Աճուրդային կարգով ձեռք բերված գյուղատնտեսական նշանակության 1,0 /մեկ ամբողջ զրո / հա մակերեսով վարելահողի համար կնքել առուվաճառքի պայմանագիր:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. ապրիլի 29-ին
գ.Մեղրաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 101

### ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 20-ի N 16 որոշումը՝ ո ր ո շ ու մ եմ.

1. Սեփականատերեր՝ Քաջբերունի, Մարինե և Մուշեղ Մկրտչյաններին և Արուսյակ Հակոբյանին ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել իրենց սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N995590, ծածկագիր 07-045-452-010) Մեղրաձոր համայնքի Մեղաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող 0.7480 հա մակերեսով նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք հողատեսքին կից, Մեղրաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Մեղրաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02082019-07-0089, ծածկագիր 07-045-0452-0054) նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսքը 0. 084988 հա մակերեսով՝ 9136 / ինը հազար մեկ հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամ արժեքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. ապրիլի 29-ին
գ.Մեղրաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 102

**ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N92 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի>> մասին 33-րդ հոդվածի պահանջներով՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Մեղրաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 13-ի << Մեղրաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը և աշխատակարգը հաստատելու մասին հաստատելու մասին » N92 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման նախաբանում գրված << Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշման >> հղումը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հղումով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*2021 թ. մայիսի 03-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 103

### ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N70-Ն որոշումն՝** ***ո ր ո շ ու մ ե մ.***

**Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի <<Մեղրաձոր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N70-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները**

**Ֆոնդային բյուջեի եկամտային մաս**
**1. տող 6410 հոդված 8411 հողի օտարումից եկամուտներ նախատեսված <<8685048>> թիվը փոխարինել <<11 469 484>> թվով:**

**Ֆոնդային բյուջեի ծախսային մաս**
**1. Բաժին 01 խումբ 01 դաս 1 տող 1213000 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 սինթետիկ հաշիվ «8 471 871» թիվը փոխարինել « 9411 371» թվով:**
**2. Բաժին 08 խումբ 2, դաս 3 տող 1215000՝ վարչական սարքավորումներ 5122 սինթետիկ հաշիվ « 0» թիվը փոխարինել « 200 000» թվով:**
**1) տող 1213000 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 սինթետիկ հաշիվ <<0>> թիվը փոխարինել <<444 936>> թվով:**
**3. Բաժին 04 խումբ 5 դաս 1, տող 1218000 նախագծահետազոտական ծախսեր 5134 սինթետիկ հաշիվ <<2 000 000>> թիվը փոխարինել <<3 200 000>> թվով:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*2021 թ. մայիսի 03-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 104

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ ՔՆԱՐԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18–ի N69-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ը և Քնարիկ Մարգարյանի ներկայացրած հայտը՝ *ո ր ո շ ու մ ե մ.***

**1.Անհատ ձեռներեց՝ Քնարիկ Մարգարյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի 2-րդ եռամսյակի համար /առևտրի օբյեկտ հիմնական շինություն 25.0 քառակուսի մետր մակերես/:**

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2021 թ. մայիսի 04-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 105

### ԱՐԱՐԱՏ ՀՐԱՆՏԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺԱՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Արարատ Հրանտի Հայրապետյանի կողմից ներկայացված դիմումը և որակավորված անձի կողմից հաստատված հողամասի բաժանման հատակագիծը՝**
***ո ր ո շ ու մ ե մ.***

**1. ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի գյուղ Արտավազ, գ. Փյունիկ 1-ին փողոց 6 հասցեում գտնվող, Արարատ Հրանտի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից /ծածկագիր 07-017-0044-0010, վկայական N 27082020-07-0120/ բաժանվող 0.17073 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Արտավազ, գյուղ Փյունիկ 1-ին փողոց 6/1 հասցեն:**

**2. ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի գյուղ Արտավազ, գյուղ Փյունիկ 1-ին փողոցի 6 հասցեում գտնվող , Արարատ Հրանտի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող մնացած 0.21697 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը թողնել նույն՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Արտավազ, գյուղ Փյունիկ 1-ին փողոց 6 հասցեն:**

**3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2021 թ. մայիսի 05-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

07 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 106

### ԱՐԵՎԻԿ ԱՐՍԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺԱՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Արևիկ արսենի Խաչատրյանի կողմից ներկայացված դիմումը և որակավորված անձի կողմից հաստատված հողամասի բաժանման հատակագիծը՝ ո ր ո շ ու մ ե մ.**

**1. ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի գյուղ Արտավազ, գ. Փյունիկ 1-ին փողոց 51 հասցեում գտնվող, Արևիկ Արսենի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից /ծածկագիր 07-017-0036-0011, վկայական N 22122014-07-0015/ բաժանվող 0.04951 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կլառուցապատման հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Արտավազ, գյուղ Փյունիկ 1-ին փողոց 51/1 հասցեն:**

**2. ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի գյուղ Արտավազ, գ. Փյունիկ 1-ին փողոցի 51 հասցեում գտնվող , Արևիկ Արսենի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող մնացած 0.05 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը թողնել նույն՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Արտավազ,գ. Փյունիկ 1-ին փողոց 51 հասցեն:**

**3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*2021 թ. մայիսի 07-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 107

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ ԼԻԼԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N69-Ն որոշման հավելված 1-ը և Լիլի Ղարիբյանի ներկայացրած հայտը՝ ո ր ո շ ու մ եմ.**

**1.Անհատ ձեռներեց՝ Լիլի Ղարիբյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի 2-րդ եռամսյակի համար /առևտրի օբյեկտ հիմնական շինություն 50.0 քառակուսի մետր մակերես/:**

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

***2021 թ. մայիսի 07-ին***
***գ.Մեղրաձոր***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 108

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով , հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N69-Ն որոշման հավելված 1-ը և Արտավազդ Խաչատրյանի ներկայացրած հայտը՝ *ո ր ո շ ու մ  ե մ.***

**1.Անհատ ձեռներեց՝ Արտավազդ Խաչատրյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի 2-րդ եռամսյակի համար /առևտրի օբյեկտ հիմնական շինություն 50.0 քառակուսի մետր մակերես/:**

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

***2021 թ. մայիսի 07-ին***
***գ.Մեղրաձոր***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 077392820, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 109

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 22-ի N03 որոշումը և անձնական դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ.***

**1.Մեղրաձոր համայնքի «այլ նպաստներ» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել ֆինանսական օգնություն 30000 /երեսուն հազար / ՀՀ դրամ Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 3-րդ փողոց 27 հասցեի բնակիչ՝ Վահրամ Արտավազդի Ղազարյանին:**

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

***2021թ. մայիսի 10-ին***
***գ.Մեղրաձոր***